ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 թ.
№ 13 (983)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 50 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Տոն, որի մասին երազել է

ԿՈՄԻՏԱՍԸ

Խորհրդային երկրի փլուզումից ի վեր, ժամանակի հարկադրանքով, երգչախմբային արվեստը կարծեք թե մեզանում մոռացվեց՝ իր տեղը զիջելով ցածրորակ, անճաշակ ու օտարածին երգարվեստների առաջ: Շատ արագ մոռացվեցին երգչախմբային արվեստի լավագույն ավանդույթներն ու խմբավարների գործունեությունը մնաց կուլիսներում… Բայց ժամանակը ամեն ինչ իր տեղն է դնում: Երկար տարիներ հանրապետության մշակութային գործի կազմակերպման երախտավոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, Մշակույթի կենտրոնի տնօրեն Արկադի Արամի Շեկունցը որոշեց շրջել մայրաքաղաքի և հեռավոր ու մոտ մարզերի դպրոցներում, օգնել երգ-երաժշտության ուսուցիչներին՝ կազմավորելու դպրոցական երգչախմբեր, նրանց ցուցաբերելով մեթոդական ու մասնագիտական անհրաժեշտ օգնություն: Նախաձեռնությանը միացան ՀՀ ԿԳ կրթության ազգային ինստիտուտը, որի հայագիտական և սոցիալ-մշակութային բաժնի մասնագետներ Գայանե Թադևոսյանի և Կարինե Ղազարյանի հետ համատեղ ջանքերով իրականացվեց մի ծրագիր, որը նոր շունչ տվեց հանրակրթական դպրոցների երգչախմբերին, դպրոցների տնօրեններն էլ վերարժևորեցին իրենց վերաբերմունքն ու խմբավարների հետ մեծ ոգևորությամբ սկսեցին նախապատրաստվել ամենամյա փառատոնին:

➢4

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԻԱՅՆ ԳԻՏԵԼԻՔ ՓՈԽԱՆՑՈՂ ՉԷ

3-րդ էջ

Հանդիպում՝ Համալսարան-գործատու

5-րդ էջ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՒՏՔԸ

6-րդ էջ

ԳԻՏԱԺՈՂՈՎ

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»

Հոկտեմբերի 22-23-ը Մանկավարժական համալսարանում անցկացվեց ՀՊՄՀ-ի, ՀՀ Գիտության պետական կոմիտեի և Կրթության ազգային ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված «Մաթեմատիկական կրթություն» գիտաժողովը: Գիտաժողովում քննարկվեցին հանրակրթական դպրոցում մաթեմատիկայի ուսուցմանը վերաբերող այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են մաթեմատիկական կրթությունը և արժեքների ձևավորման հիմնախնդիրը, մաթեմատիկայի ուսուցիչների պատրաստման հիմնախնդիրը մանկավարժական կադրերի պատրաստման երկաստիճան համակարգի պայմաններում, մաթեմատիկական կրթության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները հումանիստական կրթության պայմաններում:

➢2

Համագործակցություն

Հոկտեմբերի 15-16-ը Լիտվայի կրթական գիտությունների համալսարանի հրավերով Լիտվայում էր ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Նա մասնակցեց ուսումնական հաստատության հիմնադրման 80-ամյակին նվիրված միջոցառումներին: Մանկավարժական համալսարանի անունից Ռուբեն Միրզախանյանը Լիտվայի կրթական գիտությունների համալսարանի ռեկտորին նվիրեց բուհի ուսանողների ձեռքով ստեղծված գոբելեն աշխատանք:

Այցի ընթացքում քննարկվեցին երկու բուհերի համագործակցությանն առնչվող հարցեր: Ի դեպ, Լիտվայի կրթական գիտությունների համալսարանի ռեկտոր Ալգիրդաս Գայզուտիսը դեռևս 2012 թվականին այցելել էր Մանկավարժական համալսարան և մասնակցել բուհի հիմնադրման 90-ամյակին նվիրված միջոցառումներին՝ արժանանալով նաև Մանկավարժական համալսարանի պատվավոր դոկտորի կոչմանը:

Միջբուհական գիտագործնական գիտաժողով

Մանկավարժական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի նախաձեռնությամբ օրերս կայացավ միջբուհական գիտագործնական գիտաժողով, որի ընթացքում զեկուցումներով հանդես եկան դասախոսներ և հայցորդներ ՀՊՄՀ-ից, ԵՊՀ-ից, Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական, ԳԱԱ-ի Մանուկ Աբեղյանի անվան ինստիտուտներից:

Զեկուցողները ներկայացրին ռուս գրականության լայնամասշտաբ և տարաբնույթ խնդիրներ, միջազգային գրականության, գեղարվեստական թարգմանության և մշակույթի համեմատական ուսումնասիրությանը վերաբերող հարցեր:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Ռուզան Թադևոսյանն իր զեկուցման մեջ համեմատական զուգահեռներ անցկացրեց Մ. Լերմոնտովի 1829,1837 և 1839 թթ.-ին գրված «Աղոթք» երեք համանուն ստեղծագործությունների և նրանց հայերեն բազմաթիվ թարգմանությունների միջև՝ անդրադառնալով նրանցում տեղ գտած իմաստային, ոճային և այլ անճշտություններին:

Արտասահմանյան գրականության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Իննա Սարկիսյանն իր զեկույցում անդրադարձավ Մ. Գորկու վաղ ռոմանտիկ ստեղծագործություններում բանահյուսական մոտիվների կիրառմանը, բանասիրական գիտությունների թեկնածու Քրիստինա Բեջանյանը՝ 20-րդ դարի սկզբում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների վերաբերյալ ռուս պոետների արձագանքին, հեռուստառադիոլրագրության ամբիոնի ասիստենտ Գայանե Վարդազարյանը դիտարկեց Լ. Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպում հերոսուհու հակասական և բազմաշերտ կերպարը, եղան նաև այլ զեկուցումներ:

Ի դեպ, նմանատիպ գիտաժողովներ ամբիոնը կազմակերպում է դեռևս 2007 թվականից, հրատարակվում են ժողովածուներ: Ամբիոնի խորհրդի որոշմամբ հրատարկվեց գիտական նոր ժողովածու, որում տեղ գտան ուսանողների, ասպիրանտների, բանասեր-մանկավարժների և ռուս գրականությամբ հետաքրքրվողների համար հոդվածներ:

«Նման ժողովածուների նպատակն է չտարանջատել հայկական և ռուսական գրականությունը, այլ դրանք ներկայացնել որպես համաշխարհային գրականության օրգանական մի մաս: Հեղինակների ջանքերն ուղղված էին ինչպես լայնածավալ, այնպես էլ մասնավոր հարցերի ուսումնասիրմանը. ի դեպ, դրանցում շատ էին նաև դեռևս չտպագրված, լայն շրջանակներում չքննարկված նյութեր» ,- նշեց Ռուզան Թադևոսյանը:

Մարինա ԱՂԵԿՅԱՆ

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»

➢1 Արդեն 3-րդ անգամ Մանկավարժական համալսարանում անցկացվող մաթեմատիկական գիտաժողովն անդրադառնում է հանրակրթական վերոհիշյալ առարկայի մերօրյա հիմնախնդիրներին՝ փորձելով գտնել առարկայի դասավանդման լավագույն մոդելը՝ հիմնված հետաքրքիր փորձի վրա: Արտաքուստ չոր ու անհրապույր թվացող մաթեմատիկան անգամ դեպի աշխարհն ու արվեստները տանող ճանապարհի բանալին է. այսպես է կարծում ՀՊՄՀ դասախոս, գիտաժողովի համակարգող Համլետ Միքայելյանը: Ի վերջո, գիտաժողովի մասնակիցների համար երկօրյա գիտաժողովը հանրակրթական առարկայի խնդիրների ու զարգացման հեռանկարների շուրջ հաղորդակցվելու և փորձի փոխանակման լավագույն դպրոց է: Եվ ՀՀ ԿԳ փոխնախարար Մանուկ Մկրտչյանի, ՀՊՄՀ պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանի, նիստի նախագահող Համլետ Միքայելյանի և մյուս ելույթ ունեցողների ու զեկուցողների ասելիքի մեխը հենց դա էր՝ փորձել գտնել մաթեմատիկական կրթության բովանդակային խնդիրների և ուսուցման ձևերի այն ներդաշնակությունը, որի արդյունքում կնվազեն առկա խնդիրները և կբարձրանա առարկայի որակական նշանակությունը:

ՀՊՄՀ պրոռեկտոր Ս. Գևորգյանը առարկայի հանրակրթական դերի և ուսուցման գործընթացում կարևորեց արժեհամակարգային բաղադրիչը, ինտերակտիվ համագործակության ձևերը և բոլոր այն մոտեցումները, որոնք կօգնեն գտնելու դեպի առարկան տանող ամենակարճ ճանապարհը:

Փոխնախարար Մանուկ Մկրտչյանի զեկուցումը՝ «Մաթեմատիկան որպես հանրակրթական առարկա. զարգացման հեռանկարները», ամփոփ և ամբողջական տեղեկատվություն էր հանրակրթական առարկայի մերօրյա խնդիրների ու զարգացման հեռանկարների շուրջ:

Մեզ հետ զրույցում փոխնախարարը կարևորեց մաթեմատիկական գիտաժողովի անցկացումը, որը նվիրված է մաթեմատիկայի դասավանդման ամենաժամանակակից խնդիրների քննարկմանը, այն կարևոր նշանակություն ունի օրակարգային զեկուցումներում ընդգրկված հարցերի քննարկման և մաթեմատիկակական ժամանակակից խնդիրների առաջադրման տեսանկյունից, քանզի դրանք կարող են ստեղծել օրենսդրական փոփոխությունների հնարավորություն, առաջադրված գաղափարների մի մասը կարող են ծրագրերի հիմք դառնալ, դրանք կարևոր են նաև ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման տեսանկյունից: Այդ իմաստով դժվար է գերագնահատել ներկա գիտաժողովի նշանակությունը:

«Ինչ վերաբերում է մաթեմատիկային, սա այն հիմնական առարկան է, որը որոշում է ընդհանրապես կրթության դասավանդման բոլոր կարևոր հարցերի տիրույթը, հենց մաթեմատիկան իր պատմական ընթացքով, նաև իր դասավանդման արժեքով և հատկություններով, իր ունեցած դերով և նշանակությամբ առանցքային առարկա է համարվում: Այսինքն՝ եթե մենք մաթեմատիկա առարկայի հիմնական խնդիրների լուծումը գտնենք՝ դա հեշտությամբ կտարածենք արդեն մյուս առարկաների վրա:

Ընդհանրապես բոլոր առարկաների համար այսօր շատ կարևոր է հանրակրթական նշանակությունը: Դա պրոբլեմ է, որի լուծումը դեռևս գտնված չի: Մինչև այսօր չենք կարողանում վերաիմաստավորել առարկաների հանրակրթական ընդգրկումը կրթական դաշտ, որպեսզի նա կոչվի ոչ թե ուսումնական առարկա, այլ հանրակրթական ուսումնական առարկա»,-ասաց փոխնախարարը:

Երևանի հմ. 69 հիմնական դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Հռիփսիմե Ավագյանը փորձեց իր տեսանկյունով մատնանշել առկա խնդիրները: Նա ավարտել է կիրառական մաթեմատիկայի բաժինը և ուսուցման գործընթացում հենվում է նոր մեթոդների վրա՝ առարկան աշակերտների համար հասանելի ու գրավիչ դարձնելու համար, ինչպես, օրինակ, «մաթեմատիկական կոնստրուկտոր» ծրագիրը կիրառում է հատկապես երկրաչափության դասերին, և արդյունքը տեսանելի է:

Երկօրյա քննարկումների արդյունքում ծնված բոլոր գաղափարներն ու իրատեսական առաջարկությունները մաթեմատիկայի դասավանդման ոլորտի շահագրգիռ մասնագետների համար նոր մոտեցումների հիմք կդառնան, ապագա մանկավարժների համար՝ մագիստրոսական թեզի շուրջ նոր պրպտումների հնարավորություն: Հուսանք, որ մաթեմատիկական կրթության ապագայի հիմնաքարը կլինի հուսալի և ամուր:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Նորը համալսարանական ստորաբաժանումներում

Մանկավարժական համալսարանի ստորաբաժանումները ժամանակին համաքայլ վերանայում են իրենց մոտեցումները, փորձում գտնել աշխատանքների կազմակերպման առավել ժամանակակից ու արդյունավետ ուղիներ: Փոփոխություններն ակնհայտ են նաև պրակտիկայի կազմակերպման գործընթացում, թեև կան բացթողումներ, որոնք պետք է շտկել, որովհետև ուսանողական պրակտիկայի կազմակերպման գործընթացը անչափ կարևոր է տեսական գիտելիքների կիրառման փորձը ավարտական դիպլոմով դպրոց մտնելուց առաջ: Ուսանողի գիտելիքները թրծվում են աշակերտների հետ հարաբերությունների ձևավորման ընթացքում՝ նրան տալով վստահություն, համարձակություն, սեփական գիտելիքները գնահատելու կարևորություն ու պակասը լրացնելու անհրաժեշտություն:
Գաղտնիք չէ, որ այդ գործընթացում բավականին կարևոր է թիմի աշխատանքը, որով էլ պայմանավորված են թե՛ ուսանողների հետագա հաջողությունները, և թե՛ պրակտիկայի կազմակերպման առաջընթացը:
Այս հարցերի շուրջ էլ զրուցեցինք ՀՊՄՀ պրակտիկայի վարչության պետ, հոգեբանական գիտությունների թեկնածու Վահան Սարգսյանի հետ:

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԻԱՅՆ ԳԻՏԵԼԻՔ ՓՈԽԱՆՑՈՂ ՉԷ

-Պարոն Սարգսյան, ի՞նչ էական փոփոխություններ են կատարվել պրակտիկայի կազմակերպման գործընթացում, հատկապես ի՞նչը կառանձնացնեիք:

-Նախ պետք է նշել, որ նոր պահանջներին համապատասխան պրակտիկայի ժամաքանակը 3 անգամ ավելացվել է, բացի այդ, դպրոցների հետ կապն ավելի ամրապնդելու համար մեր ուսանողներն ամբողջ տարվա ընթացքում շաբաթական մեկ օր անց են կացնում դպրոցներում: Նրանք ներգրավվում են դպրոցական գործընթացի տարբեր ոլորտներում և կազմակերպում են հարյուրավոր միջոցառումներ:

- Իսկ ինչպե՞ս է վերահսկվում ու գնահատվում ուսանողների պրակտիկան:

-Պրակտիկայի գործընթացում և առաջավոր փորձի համար կիրառել ենք որակական տարբեր գործիքներ՝ գործողությունների, հաշվետվողականության նոր ձևեր: Գնահատման նոր ձև է թղթապանակը, ակնարկներն ու էսսեները: Օրինակ, թղթապանակում պարզ երևում է ուսանողի կարիերայի առաջընթացը:

Միաժամանակ վերանայվել են պրակտիկայի բոլոր ծրագրերը՝ մեծ տեղ է հատկացվել հոգեբանական և մանկավարժական խորհրդատվությանը, որոնց այսօր նոր որակ է հաղորդվել. մեր մասնագետներն օգնում են պրակտիկա անցնող ուսանողներին՝ հոգեբանորեն վերլուծելու և դիտարկելու իրենց մասնագիտական գործողություններն ու հնարավորությունները:

Փոփոխություններ կան ընդհանուր համակարգի գործողությունների մեջ:

-Եվ արդյունքները նկատելի՞ են…

- Փոփոխությունների գործընթացը դժվար է, բայց կան առաջին արդյունքները և պետք է փաստել, որ դա մեկ մարդու աշխատանքի արդյունք չէ: Հաջողության առաջին գրավականը թիմի համագործակցային աշխատանքն է, որի մեջ մտնում են ուսուցիչը, մանկավարժը, մեթոդիստը, հոգեբանը, պրակտիկայի ղեկավարը, աշակերտը…

-Իսկ երբ թիմի աշխատանքը չի՞ ստացվում…

- Այդ ժամանակ աշխատանքը շատ ավելի բարդանում է և ավելի մեծ մարտահրավեր է դառնում ուսանողի համար: Ներկայումս ծանրաբեռնվածությունը շատ մեծ է, և թիմային աշխատանքը ենթադրում է առավել մեծ վերահսկողություն գործի նկատմամբ:

Չպետք է մոռանալ, որ ուսուցիչը միայն գիտելիք փոխանցող չէ: Նա պետք է կարողանա շատ լավ հասկանալ ինչ անձնային բնութագիր ունի աշակերտը, և անհատական մոտեցումներ դրսևորի:

-Զևական մոտեցումներ կա՞ն այս գործընթացի կազմակերպման ընթացքում: Ի՞նչ է արվում դրանք բացառելու համար:

- Գաղտնիք չէ, որ այսօր կա ավելի մեծ պատասխանատվություն պրակտիկայի գործի նկատմամբ, սակայն այստեղ մեծ դեր ունի նաև ուսանողի՝ սովորելու ցանկությունը: Դա իր անձնական որոշումն է: Եթե նա չի ցանկանում սովորել, ուրեմն ինչ-որ բան խանգարում է նրան: Եթե ուսանողը համալսարանում է սովորելու համար, նրա մոտ ամեն ինչ կստացվի, իսկ եթե ուսանողը եկել է դիպլոմի համար և չի ուզում սովորել, դա իր գործն է: Մենք շեշտը դնում ենք ուսանողակենտրոն ուսուցման վրա:

- Մեզանում ընդունված է գործընթացի վերջում կատարել պրակտիկաների ամփոփում: Ի՞նչ մարտահրավերներ ու հիմնախնդիրներ են առանձնացվում ամփոփման ընթացքում:

-Շատ դեպքերում մեր դասախոսները ծանրաբեռնված են և ուսանողների հետ շփվում են առցանց: Ուսանողներն ակնկալում են ավելի շատ աջակցություն և շփումներ նրանց կողմից:

Մենք նաև սովոր չենք մեր աշխատանքը մանրակրկիտ պլանավորել, դա օրախնդիր է, բայց այդտեղ էլ ունենք տեղաշարժ:

- Հայ-ֆիննական համագործակցության արդյունքը ձեր աչքերով:

- Մենք մեխանիկորեն չենք վերցրել ֆիննական փորձը, այլ ֆիննական փորձագետի աջակցությամբ ստեղծել ենք մերը՝ հենվելով ֆիննների և արևմտյան պրակտիկայի որոշ գործիքների ու բաղադրիչների վրա:

- Ինչո՞վ են տարբերվում մանկավարժական և ուսումնական պրակտիկաները, ի՞նչ յուրահատկություններ կան և ի՞նչ ընդհանրություններ:

-Մանկավարժական պրակտիկան ավելի շատ իրականացվում է ուսումնական հաստատություններում: Ուսումնական պրակտիկան անց է կացվում նաև բնության մեջ և այլուր: Սակայն ընդհանուր փիլիսոփայությունը երկուսի համար էլ նույնն է՝ նպաստել ուսանողների մասնագիտական գործունեության զարգացմանը:

-Իսկ դպրոցներն ինչպե՞ս են վերաբերվում ուսանողների պրակտիկային:

-Մենք հաշվի ենք առնում այն փաստը, թե որքանով է դպրոցը պատրաստ ընդունելու ուսանողներին և հիմնականում ընտրում ենք այն դպրոցները, որտեղ տնօրենները և ուսուցչական կոլեկտիվները բարյացակամ են: Մենք չենք սևեռվում միայն կենտրոնի դպրոցների վրա: Ցավոք, դպրոցներում դեռևս հանդիպում են մասնագետներ, որոնք լավ չեն հասկանում ուսուցիչ պատրաստելու մեր առաքելությունն ու դժվարությունները: Բայց կան դպրոցական կոլեկտիվներ, որոնք սիրով ընդունում են մեր ուսանողներին, ընդգրկում նրանց դպրոցական գործընթացի մեջ, նույնիսկ հետագա աշխատանքի համար ընտրում են լավագույններին: Մենք, որպես կանոն, համագործակցում ենք նրանց հետ, ովքեր մեր կարիքն ունեն: Հավելեմ նաև՝ երբ դպրոցում զարգացած է դաստիարակչական և կառավարչական բաղադրիչը, մեր ուսանողները օգտակար գիտելիքներ են ձեռք բերում, որոնք կիրառում են իրենց հետագա աշխատանքում:

-Որո՞նք են Ձեր առաջիկա քայլերը, կգաղտնազերծե՞ք դրանք մեր ընթերցողների համար:

-Մեր առաջիկա քայլերը միտված են նրան, որ պրակտիկայի կազմակերպման գործընթացում ավելացնենք էլեկտրոնային միջոցների դերն ու օգտագործումը, որպեսզի կարողանանք առցանց կապի մեջ լինել բոլորի հետ: Դա կմեծացնի ուսանողների վստահությունն ու պատասխանատվությունն իրենց գործի նկատմամբ: Պետք է ասեմ, որ երբեմն պակասում է ստեղծագործական մոտեցումը աշխատանքին, մենք պետք է աջակցենք և հասնենք նրան, որ ավելի շատ ստեղծագործական մոտեցում ցուցաբերի յուրաքանչյուրն իր աշխատանքին:

Մյուս, ոչ պակաս կարևոր նպատակներից է նաև ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող նոր ձևերի փնտրտուքը:

Սրանք են մեր առաջիկա քայլերը, որոնց ուղղությամբ պետք է հետևողական աշխատանք տանենք:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Տոն, որի մասին երազել է Կոմիտասը

➢1 «Դեռևս կոնսերվատորիայում ուսանելու տարիներին Թաթուլ Ալթունյանը մեզ՝ ուսանողներիս, ուղարկում էր շրջանների դպրոցներ՝ ստեղծելու երգչախմբեր: Մենք սիրով էինք անում այդ գործը, ապա հավաքում էինք այդ բոլոր երգչախմբերին քաղաքի տարբեր վայրերում, պատանիներով ու երիտասարդներով միասին երգում էինք: Դա երգի իսկական տոն էր, որի մասին երազել է Կոմիտասը»,- երիտասարդական տարիների ոգևորությամբ ու հոգում փայփայած տարիների հիշողությամբ անկեղծանում է Արկադի Շեկունցը՝ հանրապետության երգարվեստի զարգացման ակունքներին մոտ կանգնած մի մարդ, ում համար հայ երգարվեստի պահպանումն ու սերունդներին փոխանցելը պատվի գործ է:

Հոկտեմբերի 23-ին ավելի քան տոնական էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած գեղեցիկ ու ընդարձակ դահլիճը, որովհետև այստեղ էին հավաքվել Դպրոցական երգչախմբերի հանրապետական 10-րդ փառատոնի մասնակիցները: Ուղիղ 10 տարի առաջ համատեղ նախաձեռնությամբ Երևան քաղաքի և հանրակրթական դպրոցների 8 երգչախմբեր համախմբվեցին Մանկավարժական համալսարանի մեծ դահլիճում, և կայացավ հանրակրթական դպրոցների երգչախմբերի հանրապետական առաջին մրցույթը, որը հետո շարունակվեց որպես փառատոն:

Դպրոցական երգչախմբերի հանրապետական փառատոնը ժամանակ առ ժամանակ անց է կացվել տարբեր ձևաչափով. երբեմն-երբեմն դահլիճներից դուրս է բերվել և անցկացվել բացօթյա հրապարակներում՝ «Մոսկվա» կինոթատրոնի առջև՝ Շ. Ազնավուրի հրապարակում, մայրաքաղաքի հրապարակում, Մանկավարժական համալսարանի՝ Ալեք Մանուկյանի փողոցի մասնաշենքերին հարող տարածքում և այլուր՝ այսպիսով ձեռք բերելով առավել ժողովրդական բնույթ և վերածվելով տոնախմբության: Տարիների հետ մեծացել է նաև փառատոնի մասնակիցների աշխարհագրական ընդգրկումն ու թիվը՝ հատելով չորս տասնյակի սահմանագիծը, սակայն այս տարի, ավանդույթը խախտվել էր և հոբելյանական 10-րդ փառատոնին հրավիրվել էին 10 տարի անընդմեջ մասնակցող երգչախմբերը:

Հոբելյանական փառատոնի մուտքը տոնական էր. ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը Երևանի, Արմավիրի, Կոտայքի և այլ մարզերի 15 երգչախմբերի խմբավարների պարգևատրեց հոբելյանական մեդալներով ու շնորհակալագրերով, իսկ ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից հանձնեց «սմարթֆոն» բջջային հեռախոսներ:

ՀՊՄՀ ռեկտորն ընդգծեց երգչախմբային արվեստի կարևորությունը և ի դեմս պրոֆեսոր Ա. Շեկունցի՝ Մանկավարժական համալսարանի գործունեությունը, որի շնորհիվ փառատոնը տարեցտարի ձեռք է բերում նոր որակ:

Տարբեր տարիների փառատոնին մասնակցել են ոչ միայն մայրաքաղաքի և Երևանին մերձ մարզերի, այլև հեռավոր Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռու մարզերի դպրոցների երգչախմբերը:

Փառատոնը յուրաքանչյուր տարի առանձնանում է որևէ թեմատիկ բովանդակությամբ: Այս տարի այն նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-ամյակին, և երգացանկում հիմնականում ընդգրկվել էին հայ երգի մեծ երախտավոր Կոմիտասի, հայ կոմպոզիտորներ Ա. Տիգրանյանի, Տ. Մանսուրյանի, Ռ. Պետրոսյանի, Խ. Մարտիրոսյանի, Ա. Այվազյանի ժողովրդական մեծ ճանաչում ունեցող երգեր, իսկ համերգային մուտքն ազդարարվեց Մ. Եկմալյանի «Ո՜վ, հայոց աշխարհ» երգի կատարմամբ:

«Դպրոցական երգչախմբային ավանդույթների վերականգնումը մեզ բոլորիս ոգևորեց, երեխաները նույնպես սիրով են մասնակցում այս փառատոնին»,- ասում է Արմավիրի մարզի էջմիածնի Խ. Աբովյանի անվան հմ. 4 հիմնական դպրոցի երգչախմբի խմբավար Գայանե Մարդոյանը և փաստում, որ երգչախմբի հաջողությունները մեծապես պայմանավորված են խմբավարի պատրաստվածության մակարդակով և երգերի ճիշտ ընտրությամբ:

«Մանկավարժական համալսարանն ամեն տարի շուրջ 20-25 երաժշտության ուսուցիչներ ու խմբավարներ է պատրաստում հանրակրթական դպրոցների համար, և հետաքրքիր էր նաև, թե ինչպիսի գործունեություն են դպրոցներում ծավալում մեր շրջանավարտները: Ահա ինչու ես սկսեցի այն դպրոցներից, որտեղ մեր շրջանավարտներն են աշխատում: Մենք մասսայական դարձրինք երգի տոնը: Աստիճանաբար ստեղծեցինք մի փոքրիկ երգչախմբային ընկերություն, և երգչախմբային արվեստը վերածնվեց:Երգչախմբային կոլեկտիվը մի ընտանիք է, որտեղ երեխաները շփվում են, մտերմանում, իսկ խմբավարները ճանաչում են իրար, փոխանակում իրենց փորձը»,-ասում է Ա. Շեկունցը:

Նա հպարտ է և ուրախ, որ փառատոնը կայացել է իր և Կրթության ազգային ինստիտուտի մասնագետների համատեղ ջանքերով, նաև իր երախտիքի խոսքն է հղում ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին, ով շատ է կարևորում արվեստը և իր աջակցությամբ մեծապես նպաստում է այս շնորհակալ գործի կազմակերպմանն ու զարգացմանը:

«Երկար տարիներ երգչախմբային գործունեությունը մեր երկրում անկում էր ապրել և մեր հիմնական նպատակն էր հանրակրթական դպրոցներում վերականգնել ու խթանել երգչախմբային արվեստը: Դա միայն արվեստ չէ, այլ ապրելակերպ, որը երեխաների մեջ ձևավորում է հանդուրժողականություն, բարոյականություն, ընկերասիրություն, բարձրաճաշակ երաժշտություն լսելու և այն մատուցելու արվեստ»,- հավելում է ԿԱԻ մասնագետ Գայանե Թադևոսյանը:

Եվ այսպես, ամեն տարի, երգը Մանկավարժական համալսարանի հարկի ներքո համախմբում է տարբեր սերունդների մարդկանց, աշակերտների, ուսանողների, դասախոսների և հյուրերի՝ նրանց սովորական մեկ օրը վերածելով տոնի:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հանդիպում հունգարացի հայագետի հետ

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հյուրընկալել էր Գերմանիայի Լայպցիգի համալսարանի գիտաշխատող, դոկտոր Բալինտ Կովաչին:

Գերմանացի դոկտորը հաճախ է հյուրընկալվում Մանկավարժական համալսարանում, հանդես է գալիս դասախոսություններով՝ ներկայացնելով հայագիտական վերջին հրապարակումները:

Ռեկտորի հետ հանդիպման ընթացքում Բալինտ Կովաչը ներկայացրեց իր բուհի պատմությունը, ժամանակագրությունն ու կառուցվածքը, անդրադարձավ հայագիտության զարգացմանն ուղղված քայլերին և առաջիկա անելիքներին:

Հայտնի են հաղթողները

Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի միջև համագործակցության շրջանակներում 2016 թվականի հունվարից երկու ուսանող մեկնելու են Ֆինլանդիա՝ մեկ կիսամյակ սովորելու Օուլուի համալսարանում:

Մրցույթին մասնակցելու համար դիմում-հայտ էին ներկայացրել սկզբնական կրթության և հատուկ կրթության ֆակուլտետների 3-րդ կուրսի 5-ական ուսանողներ:

Մրցույթն անցկացվեց հոկտեմբերի 27-ին՝ առցանց հարցազրույցի միջոցով, որը վարում էր Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի դասախոս Վեսա-Մատտի Սարենիուսը:

Հարցազրույցի արդյունքներով հաղթող են ճանաչվել հատուկ կրթության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Լիա Սարգսյանը



և սկզբնական կրթության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Հայկուշ Հարությունյանը:

Հանդիպում Համալսարան-գործատու

Համալսարան-գործատու համագործակցության շրջանակներում ՀՊՄՀ գիտական գրադարանում կայացած հանդիպմանը ներկա էին Տեմպուսի «Արարատ» ծրագրի հայաստանյան, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ներկայացուցիչները, ՀՊՄՀ-ի հատուկ կրթության ֆակուլտետի դեկանը, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողներ: Համալսարան-գործատու համագործակցության ներկայացուցիչ Հրայր Օհանյանն անդրադարձավ այսօրվա աշխատաշուկայի պահանջներին՝ նկատելով. «Աշխատաշուկան շատ դինամիկ է և արագ է զարգանում , որպեսզի կարողանանք ուսանողներին զինել դրան համահունչ գիտելիքներով և կարողություններով, առաջին հերթին պետք է ստեղծել մի հարթակ, որտեղ ուսուցման գործընթացի կազմակերպման բոլոր շահառուները ներգրավված կլինեն»: Վերջինս խոսեց Տեմպուսի «Արարատ» ծրագրի մասին՝ ընդգծելով, որ այն արդեն իսկ ստեղծել է այդ հարթակը, որը հնարավորություն է տալիս հավաքագրել բոլոր շահառուների կարծիքներն ու աշխատաշուկայի պահանջները, վերլուծել դրանք և ներկայացնել համալսարանի համապատասխան բաժիններին՝ ուսումնական պլաններում ներառելու համար:

««Արարատը» եռամյա ազգային ծրագիր է, որի նպատակն է բարելավել բարձրագույն կրթության համապատասխանությունն անընդհատ փոփոխվող աշխատաշուկայի կարիքներին՝ Հայաստանում «Համալսարան-գործատու» համագործակցության կապի ստեղծման և գործարկման միջոցով»,-հավելեց Հրայր Օհանյանը:

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հանրային տեղեկատվության վարչության ներկայացուցիչը խոսեց ՄԱԿ-ի 70-ամյա պատմության մասին՝ անդրադառնալով նաև Հայաստանում ծավալած 23-ամյա գործունեությանը:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հաղորդակցման ծրագրի ղեկավար Զառա Սարգսյանն էլ անդրադարձավ Հայաստանում ներառական կրթության ներդրման գործում կառույցի դերակատարմանը, ինչպես նաև մասնագիտական աջակցությանն ու ներկայիս խնդիրներին:

Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան Արմենուհի Ավագյանը նշեց, որ համագործակցության համար Մանկավարժական համալսարանը միշտ բաց է և պատրաստակամ: Դեկանը նկատեց, որ ներառական կրթության ոլորտում դեռ շատ անելիքներ կան. հատուկ կրթության ֆակուլտետն այդ առումով ակտիվ քայլեր է ձեռնարկում:

«Չափազանց կարևորում եմ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությունը, այն իր հերթին կնպաստի ներառական կրթության որակի բարելավմանը,- ասաց Արմենուհի Ավագյանը:-Մեր ֆակուլտետի հիմնական առաքելությունն է այսօրվա կրթական ոլորտի համար որակյալ մասնագետների պատաստումը բուհում և ներառական կրթության շարունակակության ապահովումը՝ նախադպրոցական հաստատությունից մինչև միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ»:

Մանկավարժական համալսարանի հեռանկարային ծրագրերի մշակման և մշտադիտարկման վարչության պետ Ռիտա Գևորգյանը նկատեց. «Հանդիպման նպատակն էր նաև քննարկել աշխատաշուկայում առկա հիմնախնդիրները, ընդլայնել համագործակցության շրջանակն ու առաջարկել որոշակի լուծումներ»:

Ուսանողական գիտաժողով

Հոկտեմբերի 26-28-ը ՏԵՄՊՈՒՍ ESPAQ ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Հայաստանի բարձրագույն կրթությունում որակի ապահովման գործընթացում ուսանողների մասնակցության դերի բարձրացում» խորագրով ուսանողական գիտաժողով: Գիտաժողովի նպատակը որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ուսանողների իրազեկվածության բարձրացումն էր, ինչպես նաև այդ գործընթացներում նրանց անմիջական դերի կարևորության ընդգծումը:

Գիտաժողովը ենթադրում էր անհատական հանդիպումներ ծրագրում ընդգրկված հայաստանյան բուհերի ուսանողների հետ: Հոկտեմբերի 28-ին Մանկավարժական համալսարան այցելեցին ծրագրի գործընկեր կառույցների ներկայացուցիչներ Դեվիթ Սկոթը՝ Շոտլանդիայի ազգային ուսանողական միությունից, Սիմոն Վառվելը՝ Շոտլանդիայի ազգային ուսանողական միությունից, Ստեֆան Բարբալատան՝ Ռումինիայի Սպիրու Հարեթի համալսարանից:

Հանդիպմանը Մանկավարժական համալսարանից մասնակցում էր 10 ուսանող:

Օտարերկրյա գործընկերները ներկայացրին իրենց փորձը և իրենց համալսարաններում կառավարման գործընթացներում ուսանողների մասնակցության կիրառվող մեխանիզմները: Աշխատանքային հանդիպումներն ուղեկցվում էին խմբային քննարկումներով, որոնք հնարավորություն ընձեռեցին ուսանողներին արտահայտելու իրենց գաղափարները և առաջարկները:

Արտասահմանյան գործընկերներն ուսանողների հետ ունեցած հանդիպումները բավականին արդյունավետ որակեցին. «Դա հնարավորություն կտա մեզ նոյեմբերյան թրեյնինգների համար արդյունավետ մոդել մշակել, որն, ի դեպ, անցկացվելու է ՀՊՄՀ-ում: Մենք տպավորված ենք ՀՊՄՀ ուսանողների հետաքրքրվածությամբ և գաղափարներով»:

Հիշեցնենք, որ ՏԵՄՊՈՒՍ ESPAQ-ը եռամյա ծրագիր է, որի նպատակն է ներգրավել ուսանողներին որակի ապահովման գործընթացներում՝ դրանով իսկ խթանելով ուսուցման պրակտիկան:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՒՏՔԸ

Հոկտեմբերի 16-ին Մանկավարժական համալսարանի հմ. 57 հիմնական դպրոցում տոն էր. 1-ին «բ» դասարանի 14 աշակերտների հետ դասվար Արփինե Հարությունյանը կազմակերպել էր «Ա» տառի շնորհանդես: Մաշտոցյան այբուբենի առաջին տառի յուրացումը փոքրիկների համար յուրօրինակ մուտք էր՝ դեպի մյուս տառերը տանող ճանապարհ: Ահա ինչու օրը վերածվեց տոնակատարության և խինդով լցրեց ոչ միայն առաջին դասարանցիների, այլև դպրոցի ուսուցիչների, հյուրերի, ներկաների հոգիները:

Դասվար Արփինե Հարությունյանը սովորում է ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսում, բայց արդեն իսկ աչքի է ընկնում մանկավարժին բնորոշ կարողություններով ու հմտություններով, ինչի ապացույցն էլ ներկա դասի կազմակերպումն ու անցկացումն էր:

«Ինձ համար որպես առաջին միջոցառում՝ անչափ պատասխանատու էր, մի տեսակ վախի զգացում կար, որը տեղի տվեց, երբ աշակերտներն արդարացրին իմ հույսերը: Ես հասկացա, որ ջանքերս իզուր չեն անցել. որ աշխատանքը ճիշտ կազմակերպելու դեպքում արդյունքն անխուսափելի է»,-ասաց սկսնակ դասվարը՝ դաս-միջոցառումը համարելով իր ուսուցչական աշխատանքի մուտքը:

Մանկավարժական համալսարանն առաջին դասարանցիների համար յուրահատուկ նվերներ էր պատրաստել՝ միանման գեղեցիկ դպրոցական համազգեստներ, որը նրանց ոգևորությունը բազմապատկել էր, առավել վառ դարձրել օրվա գույները:

Միջոցառումը դաս էր՝ նվիրված «Ա» տառի ուսուցմանը, և քանի որ այն բաց դասի ձևով էր կազմակերպվել, սովորական դասերից տարբերվում էր իր տոնական բնույթով: Աշակերտները ցույց տվեցին այն գիտելիքներ, որ ձեռք են բերել կարճ ժամանակահատվածում, մասնավորապես՝ մեկուկես ամսվա ընթացքում՝ գեղեցիկ ու հնչեղ առոգանությամբ մեծարելով մեսրոպյան այբուբենի առաջատարին բանաստեղծություններով, երգերով, բեմական ներկայացումներով: Աշակերտների տոնական տրամադրությունն ամբողջացավ ,,Ա,, տառանշումով խմորեղեններով և փուչիկներով, ապա դպրոցի բակում անցկացվեց կավճանկարների ցուցադրություն «Ա» տառի «մասնակցությամբ»:

Համալսարանի հմ. 57 հիմնական դպրոցի 1-ին «բ» դասարանցիների համար ուսումնական տարվա սկիզբը խոստումնալից է, դեպի գիտելիքների կախարդական աշխարհ տանող ճանապարհը՝ բաց: Սիրելի դասվարի հետ փոքրիկները կփորձեն հաղթահարել այդ ճանապարհի դժվարությունները և տառերի օգնությամբ ծանոթանալ շրջապատող աշխարհի գեղեցկությանը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«Կարող եք ճակատագրեր շրջել»

Օրերս կրթության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն մասնագիտության բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողներն այցելել էին Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ:

Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Հակոբ Թադևոսյանի նախաձեռնությամբ հենց հիմնադրամում էր կազմակերպվել ուսանողների՝ «Սոցիալական մանկավարժություն» դասընթացի «Այլընտրանքային խնամքի կազմակերպման ձևերը և սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկություններն այդ գործընթացներում» թեմայով գործնական պարապմունքը:

Հիմնադրամի տնօրենի տեղակալ, ծրագրերի ղեկավար Ռոմենա Կտակյանը ուսանողներին ներկայացրեց իրենց կառույցի գործունեության քաղաքականությունը, ռազմավարությունը, ձեռքբերումները, իրականացվող ծրագրերը:

Փոխտնօրենն ուսանողներին ներկայացրեց նաև մասնագիտական գործունեության ոլորտում իրենց ձեռքբերումները, առանձին բարդ դեպքերի վարման օրինակներ, նկատելով՝ «սոցիալական մանկավարժություն մասնագիտությունը հնարավորություն է տալիս ճակատագրեր շրջել»:

Հիմնադրամի իրավագետ-սոցիալական մանկավարժը, ով, ի դեպ, ՀՊՄՀ-ի շրջանավարտ Աննա Սարգսյանն էր, ուսանողների հետ կազմակերպեց շրջայց կենտրոնի մասնաշենքերում, ծանոթացրեց կենտրոնի կառուցվածքին, երեխաների խնամքի կազմակերպման պայմաններին:

«Չափազանց կարևոր է գործնական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման դերը մասնագետի պատրաստման գործընթացում. այդկերպ ապահովվում է տեսական և գործնական աշխատանքների ամբողջականությունը»,- նշեց դասընթացավար Հակոբ Թադևոսյանը:

Դասախոսն ընդգծեց, որ նմանատիպ այցելությունները նպաստում են կրթական ծրագրի որակի բարձրացմանը, բուհ-գործատու կապերի անմիջական ձևավորմանն ու զարգացմանը, ուսանողների կարիերայի պլանավորմանը՝ հնարավորություն տալով ծանոթանալ մասնագիտական գործունեության ոլորտներին, դրանց պատասխանատուներին և, արդյունքում, ունենալ նաև մասնագիտական աշխատանք:

Հակոբ Թադևոսյանը հպարտությամբ նշեց, որ հիմնադրամում աշխատում են նաև ՀՊՄՀ-ի շրջանավարտները:

Մարինե ԱՂԵԿՅԱՆ

Թանգարանում

1999 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի դահլիճում կատարված ոճրագործությունը, որը ցնցեց ողջ հայ ժողովրդին:

Մանկավարժական համալսարանի էկոլոգիայի և կայուն զարգացման համամալսարանական ամբիոնի դասախոս Լիդա Ավանեսյանի, կենսաբանության, քիմիայիև աշխարհագրության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության և մշակույթի հանձնաժողովի նախաձեռնությամբ հոկտեմբերի 29-ին կազմակերպվեց հանդիպում Կարեն Դեմիրճյանի թանգարանում՝ հարգանքի տուրք մատուցելու պետական-քաղաքական մեծ գործչի հիշատակին: Ուսանողները թանգարանում նմերկայացրին Դ. Դեմիրճյանի կյանքն ու գործունեությունը, նրա խոհերը, նաև ասմունքեցին:

Հանդիպման հայրենասիրական բարձր մթնոլորտը հուզեց բոլորին և Դ. Դեմիրճյանի այրի տիկին Ռիմա Դեմիրճյանին: «Հաճելի է, երբ նոր սերունդը այսչափ գնահատում է ամուսնուս գործունեությունը...»,-ասաց նա՝ իր երախտագիտությունը հայտնելով ապագա մանկավարժներին:

Էկոլոգիական կրթություն

Այսօր անհնար է պատկերացնել կյանքն առանց էկոլոգիական կրթության, իսկ էկոլոգիական կրթության բարձր որակ ապահովելու համար անհրաժեշտ է դասագործընթացում օգտագործել բոլոր միջառարկայական կապերը՝ աշակերտներին ցույց տալու համար գիտելիքների միասնականությունը, բնության գեղեցկությունը, նրա առողջարար ու գործնական նշանակությունը, նրանց մեջ արթնացնել բնությունը պահպանելու ցանկություն՝ որպես կենսապահովման, գեղեցկության, երջանկության, ներշնչման աղբյուր, որպես մարդու գոյության հիմնական և միակ միջոց:

Այսօր բարձրագույն կրթական օջախներում և դպրոցներում ուսուցման ավանդական մեթոդները փոխարինվում են ժամանակակից ինտերակտիվ մեթոդներով: Ի տարբերություն ավանդական մեթոդների, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը, ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռք բերման գործընթացում նրա անմիջական ակտիվ մասնակցությունը:

Էկոլոգիայի և կայուն զարգացման համահամալսարանական ամբիոնը ուսանողների համար մշտապես կազմակերպում է տարաբնույթ այցելություններ կրթական տարբեր հաստատություններ և բնապահպանական կենտրոններ: Այս անգամ էկոլոգիական քիմիայի III և IV կուրսի ուսանողներն այցելեցին Դիլիջանիր «Այբ» և «Թումո» կենտրոններ, որտեղ ծանոթացան նրանց ծրագրերին և տեսան, թե ինչպես են աշխատում միջազգային դպրոցներում: Ուսանողների մանկավարժական ստեղծագործական մտքի զարգացմանը նոր լիցքեր հաղորդեց նորարարական այն մթնոլորտը, որում գտնվեցին մեկ օր:

«Թումոն» մեդիա դաշտ է, որը հնարավորություն է տալիս ինքնուրույն պատրաստել ֆիլմի սցենար, ռեժիսորական միջամտություն անել, ձայնային և երաժշտական մոդելավորում իրականացնել՝ դասն էլ ավելի արդյունավետ ու հետաքրքիր, մատչելի և ուսանելի դարձնելու համար:

«Այբ» դպրոցում ուսանողները տեսան միջազգային չափանիշներին համապատասխան նոր տիպի դպրոց, որտեղ ուսուցումը աշակերտակենտրոն է: Այստեղ ստացած գիտելիքները համապատասխանում են կրթության միջազգային չափանիշներին: Շատ հաճելի և գովելի էր այն փաստը, որ այս երկու կենտրոններում աշխատում և ստեղծագործում էին նաև Մանկավարժական համալսարանի շրջանավարտներ:

Վերջին վայրը, ուր այցելեցին ուսանողները, Դիլիջանի Հաղարծին եկեղեցին էր, որի կազմում են 3 եկեղեցի, 2 գավիթ (մեկը՝ ավերված), սեղանատուն, աղոթարաններ, խաչքարեր: Պատմամշակութային ժառանգությունն անգնահատելի է: Որպես ապագա մանկավարժ բնապահպաններ՝ ուսանողների պարտքն է ճանաչել մեր երկրի հոգևոր-մշակութային գանձերը և պահպանել դրանք:

Ուսանողներին ուղեկցող դասախոսները հանգամանորեն ներկայացրին այս տարածաշրջանի ֆլորան և ֆաունան:

Ապագա մանկավարժների համար այսպիսի ուղևորություններ դեռ շատ կկազմակերպվեն,

քանզի պրակտիկայում ստացած գիտելիքները միշտ էլ ավելի արդյունավետ են:

Լիանա Մանուկյան
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ 4-րդ կուրս

Մանկավարժականում էր իրանցի ռեժիսորը

Իրանցի ռեժիսոր Ադհամ (Աբրահամ) Հադաեղը Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետում էր: «Հեռուստառեժիսուրա և մոնտաժ» առարկան ուսումնասիրող ուսանողների համար ցուցադրվեց նրա հեղինակած «I love you» ֆիլմը, որն ի դեպ նրա դիպլոմային աշխատանքն է:

Հյուրը օպերատորական կրթությունն ստացել է հայրենիքում, ապա եկել Հայաստան, մագիստրոսական կրթություն ստացել Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում՝ ձեռք բերելով նաև ռեժիսորի մասնագիտություն:

Ֆիլմի ցուցադրության ավարտին Ադհամ (Աբրահամ) Հադաեղը պատմեց ֆիլմի նկարահանումների ընթացքի մասին: «Նկարահանումները տևեցին մեկուկես տարի.ամեն ինչ հեշտ ու արագ ստացվեց, և ես հավատում եմ, որ ինձ Աստված էր օգնում: Ընդամենը տասնմեկ րոպեում հանդիսատեսին ներկայացրի մտքերս ու ապրումներս. ես ստացա այն, ինչ պատկերացնում էի»- հանդիպման ընթացքում նշեց Ադհամ (Աբրահամ) Հադաեղը:

Խոսելով Հայաստանում ստացած բարձրագույն կրթության մասին՝ իրանցի ռեժիսորը հավելեց, որ թեպետ առաջին մասնագիտությամբ օպերատոր է, սակայն մանկուց է երազել ռեժիսոր դառնալու մասին. «Ընկերներս վաղուց էին ապրում Հայաստանում, որոշեցի գալ, սովորեցի հայերեն և հասկացա, որ հենց այստեղ պետք է իրականացնեմ երազանքս: Թեպետ Հայաստանում շատ դասախոսներ դեռևս մտածում և դասավանդում են հին մեթոդներով, սակայն վստահորեն պետք է նշեմ՝ ես շատ բան սովորել եմ այստեղ»:

Զրույցի ընթացքում ռեժիսորն անկեղծացավ՝ նշելով, որ իր ֆիլմը համարում է հայկական. նկարահանումներն ընթացել են Հայաստանում և իրեն օգնել է Հայաստանի Ազգային կինոկենտրոնը:

Ավարտին Ադհամ Հադաեղն էլ իր հարցերն ուղղեց ապագա լրագրողներին՝ հույս հայտնելով, որ հետագա գործունեությունը կշարունակի Հայաստանում. «Հուսով եմ՝ կհանդիպենք իմ նոր ֆիլմի ցուցադրությանը», -հավելեց նա:

Մարինե ԱՂԵԿՅԱՆ

ՔԱՋԱԼԵՐԵԼՈՎ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանում հստակ պարբերականությամբ անց են կացվում «Չորեքշաբթի» գրական ակումբի հանդիպումներ: Այս անգամ 119-րդ հանդիպումը կազմակերպվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում:

Հյուրերին դիմավորեցին Հայր Թորգոմ վարդապետ Տոնիկյանը, Գևորգյան հոգևոր ճեմարանի ավարտական կուրսի սան Հարություն սարկավագ Քեշիշյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քահանա Մելիքյանը:

«Չորեքշաբթի» գրական ակումբի անդամները ճեմարանի սաների և տեսուչ հայր Գարեգին վարդապետի ուղեկցությամբ եղան Մայր Աթոռում, Ռուբեն Սևակի պատկերասրահ-թանգարանում, ծանոթացան սրբություններին և ցուցանմուշներին:

Շրջայցից հետո հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում կայացավ ՀՊՄՀ-ի «Չորեքշաբթի» և Գևորգյան հոգևոր ճեմարանի սաների «Սերմնացան» գրական ակումբների համատեղ հանդիպումը, որին ներկա էին նաև Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Հայր Գարեգին վարդապետ Համբարձումյանը, Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը, ՀՊՄՀ-ի դոցենտ Հակոբ Թադևոսյանը:

Տիգրան Պետրոսյանցը ներկայացրեց ակումբի մասնակիցներին, որոնք, ի դեպ, հայաստանյան տարբեր բուհերի ուսանողներ են, ապա նաև կառույցի առաքելությունը՝ քաջալերել նոր քայլեր կատարող երիտասարդ ստեղծագործողներին, հասարակության տարբեր տարիքային խմբերի ստեղծագործողներին միավորել մեկ հարկի ներքո, ապահովել փորձի շարունակականությունն ու ստեղծագործող մտքի վերարտադրողականությունը:

Ակումբի անդամները ներկայացրին իրենց ստեղծագործությունները, ծավալվեց երկխոսություն:

Հանդիպման ավարտին Հայր Գարեգին վարդապետը բարեմաղթանքներ հղեց և օրհնություն խոսք ասաց: Գիտական նիստն ավարտվեց նվերների փոխանակմամբ և «Պահպանիչ» աղոթքով:

Երկօրյա արշավ դեպի Դսեղ

Հոկտեմբերի 18-ից 19-ը ՀՊՄՀ ուսանողական խորհրդի «Արշավներ» ակումբը Դսեղում իրականացրեց երկօրյա արշավ:

Լինելով ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայրում՝ ուսանողներն այցելեցին բանաստեղծի տուն-թանգարան, եղան գյուղի եկեղեցում, ապա հաղթահարելով երկար ու դժվարին ճանապարհը՝ հասան Դսեղ գյուղից ոչ հեռու գտնվող լիճը, որը հիշատակվում է Թումանյանի ստեղծագործություններում և որին գյուղացիները «Ծովեր» են կոչում: Ուսանողները վրաններ խփեցին տեղանքում, որին հաջորդեցին խարույկը, հաճելի երաժշտությունն ու անմոռանալի ժամանցը:

Այցելություն պատմամշակութային վայրեր



Մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի ուսանողական խորհուրդը հոկտեմբերի 18-ին կազմակերպեց ուխտագնացություն դեպի Դիլիջան, Պարզ լիճ, Հաղարծին, Գոշավանք և Սևան:

Ուսանողները ծանոթացան Գոշավանքի ճարտարապետությանն ու պատմությանը, Հաղարծինում տեղի ունեցավ ուսուցողական և ճանաչողական հանդիպում քահանայի հետ, այնուհետև ուսանողներն ուղևորվեցին Պարզ լիճ, հիացան գեղատեսիլ բնությամբ և կազմակերպեցին հաճելի հանգիստ բնության գրկում:

Ուղևորության վերջնակետը Սևանի եկեղեցին էր, ուր կայացավ հանդիպում Սևանի թեմի առաջնորդի հետ: Վերջինս պատմեց եկեղեցու մասին և իր օրհնությունը տվեց ուսանողներին:

Ուխտագնացությունն ուսանողների համար նոր գիտելիքների ձեռքբերման, հետաքրքիր հանդիպումների, հոգևոր աշխարհը հարստացնելու հնարավորություն էր, որ դրական լիցքերով ու բարձր տրամադրությամբ ամբողջացրեց օրվա խորհուրդն ու իմաստը:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպել էր ճանաչողական արշավ դեպի Արագածոտնի մարզի պատմամշակութային վայրեր: Արշավականներն այցելեցին Տեղեր վանական համալիր, որը կառուցվել է 13-րդ դարում և կանգուն է մինչ օրս: Այցի ընթացքում ֆակուլտետի բարձր կուրսի ուսանողները ներկայացրին իրենց պատմական գիտելիքները վանական համալիրի մասին:

Հաջորդ կանգառը Ամբերդ ամրոց-բերդաքաղաքն էր: Այն թվագրվում է որպես 10-13-րդ դարերի կառույց, որն Անի մայրաքաղաքի համար ունեցել է կարևոր պաշտպանական նշանակություն: Բացի բերդից և Ս. Կաթողիկե եկեղեցուց ՝ամրոց- բերդաքաղաքն իր մեջ ընդգրկում էր նաև գաղտնուղիներ, մատուռ, բաղնիք, պաշտպանական պարիսպներ և օժանդակ այլ շինություններ: Ամբերդի Ս. Կաթողիկե եկեղեցում ուսանողները միասնաբար հնչեցրին «Հայր Մերը»: Այստեղ ուսանողները ծանոթացան նաև հայ խաչքարային արվեստին, քանզի ներկայացված էին տարբեր ժամանակաշրջանների տարբեր զարդաքանդակներով խաչքարեր, որոնք հիացմունք են պատճառում բոլորին: Ամբերդին հաջորդեցին Սաղմոսավանքն ու Օհանավանքը, որոնք թե՛ իրենց աշխարհագրական դիրքով, թե՛ իրենց ճարտարապետական անկրկնելի լուծումներով հիացրին ապագա մանկավարժներին:

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Հանձնված է տպագրության 04.111.2015 թ.